ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 01 >> 06 2013թ. N: 139-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԲԱՎՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԲԱՎՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)>> կարգի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2013 թվականի մայիսի 22-ի նիստի թիվ 4 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի դրական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2013 թվականի հունիսի 3-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար Արմեն Վարդանյանի լիազորությունները:
2. Արմեն Վարդանյանին 2013 թվականի հունիսի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝